Նախագիծ

Հաստատված է
Վեդու քաղաքային համայնքի
ավագանու _________ թիվ _____ նիստով

Հայաստանի Հանրապետություն

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

Վեդու համայնքապետարան

# ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ

# ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն


1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն
   - 2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն
   - 2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը
   - 2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը
   - 2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները
   - 2.5 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ
   - 2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում
   - 3.1 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ
4. ՀԶԾ ֆինանսավորում
5. ՀԶԾ մոնիթորինգ

## 1. <u>Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք</u>

ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀԶԾ) մշակելիս հաշվի է առնվել փոփոխված ՀՀ Սահմանադրությունը և ՏԻՄ օրենքի դրույթները:

ՀԶԾ-ն մշակելիս առանձնացվել և նկատի են ունեցվել մեթոդաբանական հետևյալ չափանիշները՝

- համայնքի ֆինանսական կարողությունը.
- համայնքի բնակչության թվաքանակը.
- համայնքում առկա ենթակառույցներն ու մատուցվող հանրային ծառայությունները.
- համայնքում առկա վտանգները (ռիսկերը):

ՀԶԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել նաև համայնքում հանրային ծառայությունների մատչելիությունը և հասանելիությունը, նոր ծառայությունների մատուցմանը վերաբերող և դրանցով պայմանավորված՝ լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները, համայնքի համաչափ զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսմանն ուղղված առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ գյուղատնտեսության, փոքր և միջին բիզնեսի, տուրիզմի և այլնի) հնարավորությունները, համայնքի տարածքում պատշաճ կառավարման իրականացման անհրաժեշտությունը, ինչպես նաև համայնքում աղետի բազմաբնույթ վտանգները (ռիսկերը) և դրանց կառավարման միջոցառումները: Համայնքի զարգացման ծրագիրը մշակվել է՝ հիմք ընդունելով համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները և նպատակ հետապնդելով հետևողականորեն բարեփոխումներ իրականացնելու ճանապարհով աստիճանաբար լուծել համայնքում առկա հիմնախնդիրները և բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները: ՀԶԾ-ն դիտարկելով որպես համայնքի ռազմավարական պլանավորման և մասնակցային կառավարման կարևորագույն միջոց, համայնքի ղեկավարին կից գործող ՀԶԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմինը՝ փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, ՔՀՄՀ կազմակերպությունների և շահագրգիռ այլ անձանց հետ լիակատար փոխըմբռնում ՀԶՀԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

ՀԶԾ-ի 2-րդ բաժինը ներառում է՝ համայնքի սոցիալ-տնտեսական ընդհանուր, ոլորտային փաստացի իրավիճակի և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների բնութագրումը և վերլուծությունը՝

հաշվի առնելով ՀԶԾ-ի մշակման մեթոդաբանական չափանիշների ազդեցությունը համայնքի ՏԻՄ-երի գործունեության ոլորտների կազմի վրա, համայնքում առկա սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների ֆիզիկական վիճակի գնահատումը, դրանց շահագործման, պահպանման և նորոգման հետ կապված խնդիրները, ինչպես նաև դրանց զարգացման հնարավորությունների, կարողությունների ու ռեսուրսների վերլուծումը և գնահատումը: Համայնքի ընդհանուր և ոլորտային կարիքների գնահատման հիման վրա կազմվել է համայնքում առկա հիմնախնդիրների ցանկը՝ առանձնացնելով նրանք, որոնց լուծումը նպատակահարմար է ներառել սույն ՀԶԾ-ում՝ ելնելով համայնքի ռեսուրսային հնարավորություններից: Բաժնում ներառվել է նաև համայնքի ՈՒԹՀՎ-վերլուծությունը՝ հիմնվելով համայնքի իրավիճակի վերլուծության ու գնահատման արդյունքների վրա և ձևակերպելով համայնքի ուժեղ և թույլ կողմերը, զարգացման ներքին ու արտաքին հիմնական հնարավորությունները, համայնքին սպառնացող հիմնական վտանգները:

ՀԶԾ-ի 3-րդ բաժինը ներառում է՝ համայնքի երկարաժամկետ տեսլականը, զարգացման ռազմավարությունը և սույն ՀԶԾ-ի հիմնական նպատակները:

ՀԶԾ-ի 4-րդ բաժինը ներկայացնում է զարգացման ծրագրի ֆինանսավորման հնարավոր տարբերակները և կանխատեսումը:

ՀԶԾ-ի 5-րդ բաժինը ներառում է՝ ՀԶԾ-ի իրականացման մշտադիտարկման (մոնիթորինգի) և գնահատման, տարեկան հաշվետվությունների կազմման և քննարկման ձևաչափերը:

ՀԶԾ-ի հավելվածները ներառում են՝

- համայնքի ՁԾ-ում ներառված ոլորտային ծրագրերի ձևակերպումները:

## 2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

### *2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն*

Պատմական համառոտ ակնարկ

Վեդի քաղաքի հիմնադրման տարեթվի մասին ստույգ տեղեկություններ չկան: Նրա մասին առաջին հիշատակությունները գալիս են ուրարտական ժամանակներից: Նրա տարածքում և մոտիկ շրջապատում գտնվող բերդ-ամրոցները թվագրվում են Ք.ա. II-I հազարմյակներով, իսկ շինարարական աշխատանքների ժամանակ հանված կարասները վերագրվում են մեր թվարկության III-IV դարերին, գերեզմանոցում պահպանվել են խաչի նշանով գերեզմանաքարեր (IX —Xդարեր): Վեդի անունը առաջին անգամ հիշատակվում է XIII-XIV դարերում՝ Նորավանքում Օրբելյանների թողած նվիրագրական արձանագրություններում: Այնուհետև այն տարբեր ձևերով՝ Վեթի, Վադի, հիշատակվում է մինչև XIX դարի սկիզբը: Ըստ ռուս աշխարհագիր Ի.Շոպենի, բնակավայրը 1830թ. ունեցել է Վերին Վեդի անվանումը: Այն 19-րդ դարի կեսին զբաղեցնում էր Վեդի գետի երկու ափերը, ուներ մեծ և հին եկեղեցի, 240 տուն թաթար և 12 հայ բնակիչ: 1828 թ. Վեդի բասարի մահալում Մակուի շրջանից վերաբնակվել են 1170 շունչ հայեր՝ 640-ը Դավալուում և 530-ը՝ Վեդիում: XIX դարի վերջին Վեդի կոչվել է Մեծ /Բեյութ/ Վեդի, ուներ 2240 բնակչություն, այդ թվում 117 հայ բաղթական և հիմնականում թաթարներ /թուրքեր/: Վեդիի համար հայացման պրոցեսը սկսվել է 20 դարի քառասնական թվականների վերջերին: Մինչև 1930 թ. եղել է բավառակի կենտրոն, սիկ 1930 թ. սեպտեմբերի 9-ի վարչական ռեֆորմով ստեղծվել է Վեդու շրջան, որից 1938-1947 թթ. առանձնանում է Ղարաբաղլարի շրջանը: Վեդի 1958թ. ունեցել է 4500 բնակիչ: 1962 թ. Վեդին ստանում է ավանի կարգավիճակ, իսկ 1996թ.՝ քաղաքի:

Աշխարհագրական դիրքի նկարագիր

Քաղաքի տեղանքը հարթ է, թույլ թեքված դեպի արևմուտք: Իսկ բուն կենտրոնական մասում գտնվում է հարթեցված գագաթով մոտ 10 մ հարաբերական բարձրությամբ երկրաբանական ավելի հին ապարներից կազմված փոքրիկ բլուր: Ծովի մակերևույթից ունի 900 մետր բարձրություն: Մայրաքաղաքից հեռու է 48 կմ, երկաթուղային Այգավան կայարանից՝ 8 կմ, իսկ Երևան - Երասխ ավտոմայրուղուց՝ 9 կմ: Վեդին գտնվում է մերձարևադարձային կլիմայական գոտում, որտեղ ձևավորվել է կլիմայի չոր, խիստ ցամաքային տիպը: Ձմեռը ցուրտ է, անամպ, անհողմ: Հաստատուն ձյունածածկույթ ձևավորվում է ոչ ամեն տարի: Բնորոշ է ջերմաստիճանային շրջադասությունը: Ամառը շոգ է, տևական /4-5 ամիս/: Բնորոշ են

լեռնաhովտային քամիները, որոնց արագությունը կեսօրից hետո hասնում է մինչև 15-20 մ/վրկ-ի: Լեռնաhովտային քամիները մեղմացնում են Վեդի քաղաքի ամառային տապը: Հարաբերական խոնավությունը hասնում է 15-20 տոկոսի: Գարունը կարճատև է: Առանձնապես hաճելի է Վեդու արևոտ, անհողմ, տևական աշունը, երբ hասունանում են այգիների ու դաշտերի բարիքները:Վեդի քաղաքում մնական լանդշաֆտը կիսաանապատային է: Հումուսից աղքատ գորշաhողերը hազարամյակների ընթացքում ջրովի երկրագործության պայմաններում վերածվել են կուլտուր-ոռոգելի hողերի: Տեղումների տարեկան քանակը 200-300 մմ է:

**Ժողովրդագրություն**

Յ ամ այ նքի բ ն ակ չ ու թյ ան թի վը և ս ո ց ի ալ ակ ան կ ազ մ ը ,

այ դ թվ ու մ`          կ ան այ ք          7244- մ ար դ

տղ ամ ար դ ի կ          6764- մ ար դ

**բ ն ակ չ ու թյ ան տ ար ի ք այ ի ն կ ազ մ ը**

| | | |
|---|---|---|
| 0-1 | - | 194 |
| 1-2 | - | 390 |
| 3-4 | - | 347 |
| 5-6 | - | 425 |
| 7-10 | - | 632 |
| 11-14 | - | 494 |
| 15-17 | - | 460 |
| 18-22 | - | 1170 |
| 23-45 | - | 5088 |
| 46-62 | - | 3215 |
| 63 և ավ ե լ | - | 1593 մ ար դ |

Այ դ թվ ու մ .

| | | |
|---|---|---|
| թո շ ակ առ ո ւ ն ե ր | - | 1259 |
| մ ի ակ ո ղ մ ան ի ծ ն ո ղ ազ ո ւ րկ ե ր ե խան ե ր | - | 172 |
| ե րկ կ ո ղ մ ան ի ծ ն ո ղ ազ ո ւ րկ ե ր ե խան ե ր | - | 2 |
| հ աշ մ ան դ ամ ն ե ր | - | 400 |
| աշ խատ ո ւ ն ակ բ ն ակ չ ո ւ թյ ան | - | 10544 |
| աշ խատ ան ք ո ւ ն ե ց ո ղ ն ե ր | - | 5879 |
| գ ո րծ ազ ո ւ րկ ն ե ր | - | 443 |

ընտանիքների թիվը - 2901

՝ Փարոս՚ ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ - 383

զոհվածների ընտանիքներ - 31

Բնակչության չափահաս անդամներից 25 տոկոսը զբաղվում է արտագնա աշխատանքով: Այժմ Վեդի քաղաքի բացակայողների թիվը 3757 մարդ է:

**Տեղական ինքնակառավարման մարմինները**

Յամայնքի ավագանու անդամների թիվը – 11 ավագանու անդամ

**Յամայնքի ձեռնարկությունները**

Ձեռնարկությունների թիվը – 101

***2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը***

- *Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն*

*Վեդու քաղաքային համայնքի տարեկան բյուջեն եկամուտների գծով կազմում է 283606000 դրամ: Որից.*

*սեփական եկամուտների բաժինը կազմում է 59341200 դրամ, որը ընդհանուր բյուջեի 21 տոկոսն է:*

- *Համայնքի հիմնական արդյունաբերական ձեռնարկությունները և արդյունաբերական արտադրանքը*

Վեդի քաղաքում գործում են ինչպես հայթաթող, այնպես էլ վերամշակող արդյունաբերությամբ զբաղվող հիմնարկ ձեռնարկություններ: Գործում են քարի վերամշակման, սոսնձի և պլաստմասե խողովակի արտադրության, պանրի, հացաբուլկեղենի արտադրամասեր: Հիմնական սպառման շուկաները դրանք տեղի շուկաներն են: Արտահանմամբ զբաղվում են քարի և պլաստմասե խողովակի արտադրությամբ զբաղվող հիմնարկները: Այս ոլորտում զբաղվածների թիվը 170 մարդ է:

- *Համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները*

Վեդի համայնքում գյուղացիական տնտեսությունների թիվը հասնում է 1086-ի: Յիմնականում զբաղվում են խաղողի / 689 միավոր հող/, ցորենի, բանջարաբոստանային կուլտուրաների / 1103 միավոր հող/, հնդավոր և կորիզավոր

/281 և 220 միավոր հող/ պտուղների աճեցմամբ: Հիմնական սպառման շուկաներն են տեղի շուկաները և գյուղ. Արտադրանքի մթերման գործարանները:

Ուսումնասիրությունների ընթացքում գյուղ.մշակությամբ զբաղվող տնտեսությունների նշած հիմնական խնդիրները կապված են տնկիների, պարարտանյութերի (կառավարությունն օժանդակում է ազոտային պարարտանյութերով, սակայն սուպերֆոսֆատը և կալիումային աղը, որոնք նույնպես ոչ պակաս կարևոր են գյուղատնտեսության համար` դժվարությամբ են կարողանում հայթայթել), հենասյուների ձեռքբերման, մասնագիտական խորհրդատվության և հիվանդությունների ախտորոշման, մասամբ էլ` բուժանյութերի հետ, շուկաներից ձեռք բերված դեղորայքը առանց երաշխիք է և շատ հաճախ չեն տալիս ցանկալի արդյունք:

Փորձից հայտնի է, որ Հայաստանի շուկայում ծիրանի “առաջին և վերջին” բերքը վաճառվում է անհամեմատ ավելի բարձր գներով, քան միջանկյալ ժամանակահատվածում, երբ երկրի բոլոր մրգատու գոտիներում այն արդեն հասած է լինում: Մեր համայնքում ծիրանը հասնում է հենց այն ժամանակ, երբ շուկան հագեցած է դրանով: Հետևաբար, այգեգործներն իրենց բերքը վաճառում են միջին և ցածր գներով: Բերքի 40-50%-ը, որը կազմում է բարձրորակ մասը, վաճառվում է 400-600 դրամով` արտահանող ընկերություններին, 10-20%-ը 100-130 դրամով հանձնում են Երևանի շուկաներում գործող վերավաճառողներին, մնացած մասն էլ մթերվում է պահածոների գործարանների կողմից` միջինը 50-80 դրամով (եթե փոքր տնտեսություններ են և ստանում են քիչ ծավալի բերք, ապա բերքի հանձնումը կատարվում է վերավաճառողների միջոցով, ովքեր հավաքում են տնտեսություններից 30 դրամով և հանձնում գործարանին` մեծ ծավալով): Մեկ հեկտար ծիրանի և դեղձի այգու մշակման համար ծախսվում է 400 հազար դրամ: Մշակումից հետո բերքահավաքի վրա ծախսվում է 1տ.-ի համար 40 հազար դրամ: Այս ծախսը հավասարապես աճում է` կախված այդ տարում ստացված բերքի քանակից: Մեկ հեկտար ծիրանի այգու բերքի վաճառքից ստացվում է 7 մլն դրամ հասույթ (30տ. բերքի դեպքում): Շահույթը կազմում է միջինը 5մլն դրամ: Վերը նկարագրվածը ցույց է տալիս ոլորտի հիմնական պատկերը: Սակայն համայնքում չկան չորանոցներ: Չրագործությամբ զբաղվում են գյուղացիական տնտեսությունները, որոնք հետագայում վաճառում են տեղի շուկաներում, Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում` ապրանքափոխանակության միջոցով: Այգեգործների մեծ մասը պատրաստակամ են հիմնել չրանոցներ և զբաղվել

չրագործությամբ: Պտղի վերամշակումը համայնքի ներսում հնարավորություն է ընձեռում ավելացնել լրացուցիչ եկամուտ յուրաքանչյուր կիլոգրամ պտղի դիմաց: Եթե 1 հեկտարից ստացվող բերքի ընդամենը 20%-ը` մոտ 4000 կգ (սա այն մասն է, որը վաճառվում է 100-150 դրամով) վերածվում է չրի, ապա տնտեսությունը բերքի վաճառքից ստացվող 400-500 հազար դրամի փոխարեն ստանում է առնվազն կրկնակի ավել եկամուտ: Արտադրողականությամբ ճյուղի գրեթե բոլոր ոլորտներն էլ մրցունակ են երկրի այլ համայնքների հետ համեմատած: Սակայն համայնքի ներսում տեխնիկական և բուստանային մշակաբույսերն էապես զիջում են այգեգործության ոլորտին, եթե որոշներն էլ արտադրողականությամբ մրցակցում են, ապա շահութաբերությամբ զիջում են միանշանակ: Տեխնիկական և հացահատիկային մշակաբույսերի մասշտաբային մշակումը պայմանավորված է նաև տվյալ բերքի պահպանման երկար ժամկետի գործոնով: Այսինքն, եթե մրգերի հասունացման դեպքում խնդիր է առաջանում բերքն արագ իրացնել, որպեսզի չփչանա, ապա ցորենի և արևածաղկի դեպքում նման խնդիր չկա, և մարդիկ կարողանում են պահեստավորել ապրանքը, մինչև կվաճառեն: Այս գործոնի հետ հաշվի նստելը արդի թեմա էր անցնող տարիներին, սակայն այսօր, երբ բավական առաջընթաց կա խաղողի մթերման և մրգերի արտահանման, ինչպես նաև չրերի արտադրության և արտահանման ուղղությամբ, ապա հողերի տրամադրումը տեխնիկական մշակաբույսերին դառնում է, մեղմ ասած, ոչ արդյունավետ:

Ուստի համայնքի առաջնային խնդիր է խրախուսել և աջակցել այն գյուղացիական տնտեսություններին , որոնք կցանկանան համայնքում ստեղծել սառնարանային տնտեսություններ, ինչպես նաև չորանոցներ: Սառնարանային տնտեսությունների և չորանոցների հիմնումը կստեղծի նոր աշխատատեղեր, գյուղ.ընտանիքների համար կդառնա սեփական եկամուտների աճի գրավական: Համայնքում առկա վարելահողերը գյուղացիական տնտեսությունները կփոխարինեն խաղողի և պտղատու այգիների, որի արդյունքում կբարձրանա հողի հարկի արժեքը:

## *Անասնապահություն*

Վեդի համայնքի բնակչության հիմնական մասը զբաղվում է անասնապահությամբ: Բնակչությունը խոշոր եղջերավոր անասուններին հիմնականում պահում է իր տան հարակից տարածքում գտնվող անասնագոմում: Գարնան ամիսներին անասուններին տեղափոխում են արոտավայրեր, որը բերում է մսի թանկացմանը: Համայնքներում արտադրվող կաթը վերամշակվում է որպես մածուն,

պանիր և կարագ՝ տնային պայմաններում: Կարագն օգտագործում են սեփական սպառման համար, վաճառում են պանիրը, կաթը և մածունը: Մեծ քանակությամբ արտադրողները պանիրը հանձնում են Երևանի խանութներին և վերավաճառողներին, իսկ կաթն ու մածունը կանայք վաճառում են Երևանի, Արտաշատի և հարևան համայնքների բակերում: Աշնան ամիսներին երբ արոտավայրերից վերադառնում են սկսվում է հիմնական մորթի և մսի վաճառքի սեզոնը, որի արդյունքում գները սաստիկ իջնում են հաշվի առնելով որ երկար ժամանակ քայլերով արոտավայրերից հետ բերած անասունները կորցնում են և քաշը, և մսի տեսքը չի ունենում սպառողին գրավող տեսք: Անասնագոմի և սպանդանոցի հիմնումը հնարավորություն կտա անասուններին գնել, բտել և վաճառել տարվա բոլոր ամիսներին: Ինչպես նաև ժամանակակից սարքավորումներով հագեցած անասնագոմի և սպանդանոցի շահագործումը հնարավորություն կտա կանխարգելել գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունները, սպառողների համար առավել անվտանգ ու որակյալ արտադրանք ապահովել և աստիճանաբար նվազագույնի հասցնել բակային մորթը: Այն նաև կխթանի բնակչության շրջանում անասնապահությանը: Անասնագոմի և սպանդանոցի հիմնումից կօգտվեն և Վեդի համայնքի և հարակից համայնքների բնակչությունը, կստեղծվեն նոր աշխատետեղ:

Անասնագոմի և սպանդանոցի հիմնման համար համայնքում ունենք ներդրողներ, որոնք պատրաստ են ներդրում կատարելուն:

***Ջերմոցային տնտեսություններ***

Ջերմոցային տնտեսություններ համայնքում գործում են մոտ 15 ջերմոցային տնտեսություններ՝ 200-400մ2 մակերեսներով: Մշակում են լոլիկ, վարունգ, տաքդեղ, կարտոֆիլ, ինչպես նաև աճեցնում են ծաղիկներ: Ջերմոցներում մշակությունը տարվում է երկու փուլով՝ փետրվարի վերջերից մինչև հուլիսի կես և օգոստոսից մինչև նոյեմբերի վերջ: Ձմռան ամիսներին գործունեությունը դադարեցվում է՝ պայմանավորված ջեռուցման բարձր ծախսերով: Միայն ծաղիկ աճեցնող 2-3 տնտեսություններն են շուրջ տարին գործում:

- ***Զբոսաշրջային հետաքրքրություններ կայացնող բնական, պատմական և մշակութային հուշարձաններ***

“Խոսրովի պետ.արգելոց” անտառ գնացող տուրիստները անցնում են Վեդի համայնքի տարածքով: Այցելուները և արտասահմանից և երկրի ներսից են: Տուրիստներն այցելում են Խոսրովի անտառ առանց համայնքում ժամանակ անցկացնելու հեռանում. համայնքում չկան տուրիստին հետաքրքրող ծառայություններ: Վեդի քաղաքում կան 9 պատմական և մշակութային հուշարձաններ: Դրանցից Դավիթ Բեկ ամրոցը միջնադարյան է, սակայն հնագիտական պեղումներ չեն իրականացվել: Այն կարող է հանդիսանալ , որպես

զբոսաշրջության հնավայր: Դավիթ Բեկ ամրոցի հարակից տարածքում հանգստյան գոտիների ստեղծման, սրճարանների, հասարակական սննդի օբյեկտների, հետագայում նաև հյուրատների հիմնման ուղղությամբ առաջիկա 5 տարիների ընթացքում անհրաժեշտ է իրականացնել լուրջ ներդրումներ: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է 40 մլն դրամ, ճանապարհի կոփճապատում, հարակից տարածքի մաքրում և հանգստի գոտու և հասարակական սննդի օբյեկտների ստեղծում: Ծրագրի իրականացումը կստեղծի նոր աշխատատեղեր, կակտիվացնի առևտրի ոլորտը, կավելացնի նոր տեղական տուրքերի գանձումը համայնքի բյուջե:

- ***Դպրոցական, նախադպրոցական և արտադպրոցական կրթական հաստատություններ, ԲՈՒՀ-եր***

*Նախադպրոցական ուսումնական հաստատություններ*

Վեդու համայնքապետարանի ենթակայությամբ գործում են 3 համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատություններ, երեխաների ցուցակային թիվը կազմում է 480 երեխա, մանկավարժական անձնակազմը՝ 36 մարդ:

2012-2016թթ. ընթացքում ըստ հաստատված աշխատանքային ծրագրի՝ կազմակերպվել են նախադպրոցական կրթության չափորոշիչներին համապատասխան միջոցառումներ, պահպանվել են սննդի նորմատիվային չափորոշիչները, օրական մեկ երեխայի հաշվարկով սննդի վրա ծախսվել է 300 դրամ:

Քաղաքապետարանի կողմից պարբերաբար անցկացվել են ստուգումներ նախադպրոցական կրթության չափորոշիչները պահպանելու համար:

2013թ. Վեդու 3 մանկապարտեզներում իրականացվել է ավագ խմբերի վերանորոգման և գույքի ձեռք բերման աշխատանքներ:

- 2015թ. շին.վերանորոգման աշխատանքներ են իրականացվել Վեդու թիվ 3 մանկապարտեզի վարչական մասում:
- 2012-2016թթ. 3 մանկապարտեզների համար ձեռք է բերվել կենցաղային /սառնարան, լվացքի մեքենա/ և համակարգչային տեխնիկա:
- Վեդու թիվ 3 մանկապարտեզի համար ձեռք է բերվել ջրի բակ 3 տոննա տարողությամբ:
- Իրականացվել է Վեդու թիվ 2 մանկապարտեզի տանիքի վերանորոգման աշխատանքները:

Առաջիկա 5 տարիների ընթացքում նախատեսվում է 3 մանկապարտեզների համար իրականացնել հետևյալ ծրագրերը.

1. Մանկապարտեզներում խաղահրապարկների համար նոր գույքի ձեռք բերում

2. Մանկապարտեզներում խմբասենյակների համար նոր գույքի /փափուկ և կոշտ/ ձեռք բերում
3. Մանկապարտեզների համար կենցաղային և էլ.տեխնիկայի ձեռք բերում / փոշեկուլ 3 հատ, գազօջախ 1 հատ, սառնարան 4 հատ, հեռուստացույց 3 հատ, երաժշտական նվագարկիչներ 3 հատ,
4. Մանկապարտեզների սան.հանգույցների վերանորոգում / սպասարկող անձնակազմի համար/
5. Նոր խմբասենյակների ավելացում, պայմանավորված նախադպրոցական տարիքի երեխաների թվով:
6. Թիվ 3 մանկապարտեզի հիմնանորոգում

**Հիմնական կրթություն**

Վեդի քաղաքում գործում են երեք դրոցներ, որից մեկը՝ ավագ, երկուսը հիմնական: Դպրոցներում սովորողների թիվը 2800 մարդ է: Դպրոցն ավարտածները հիմնականում շարունակում են ուսումը Երևան քաղաքում: Վեդի քաղաքի կրթական ցենզը ներկայացված է գրաֆիկ 2-ում:



- Վեդի քաղաքի 3 դպրոցներն էլ գտնվել են համայնքապետարանի ուշադրության կենտրոնում: 2016թ. դպրոցներին է տրամադրվել սառնարաններ և խմելու ջրի ապարատ:

*Արտադպրոցական կրթություն*

Վեդի քաղաքում գործում են 3 արտադպրոցական կրթական հաստատություններ: Դրանք են ` Երաժշտական դպրոցը, Գեղարվեստի և սպորտ դպրոցները: Յուրաքանչյուր տարի շուրջ 700 երեխա օգտվում են այդ դպրոցներից: Նախորդ տարիների ընթացքում ամբողջապես վերանորոգվել է Վեդու մարզադպրոցը:

2012թ. Վերանորոգվել է Երաժշտական դպրոցի 1-ին մասնաշենքի տանիքը և հոսանքագծերը:

2013թ. փոփոխվել են Վեդու երաժշտական դպրոցի պատուհանները:

2014թ. ջեռուցման համակարգ է անց կացվել Վեդու Գեղարվեստի դպրոցում:

2017-2021թթ. Նախատեսվում է այս ոլորտներում իրականացնել .

1. Երաժշտական դպրոցի սան.հանգույցի կառուցում,
2. Երաժշտական դպրոցի համար երաժշտական գործիքների ձեռք բերում
3. Երաժշտական դպրոցի դահլիճում ջեռուցման համակարգի տեղադրում
4. Գեղարվեստի դպրոցի պատուհանների փոփոխում նորով
5. Գեղարվեստի դպրոցի ջեռուցման համակարգի միացում

- *Առողջապահական հաստատություններ*

Վեդի քաղաքում գործում է Վեդու Բժշկական կենտրոն, Վեդու ծննդատուն բժշկական հաստատությունները:

Վեդու քաղաքապետարանը 2012-2016թթ. աջակցել է Վեդու ԲԿ-ին :

Վեդու քաղաքապետարանը հոգում է անապահով ընտանիքիների անդամների բուժման ծախսերը:

- <u>Սոցիալական ապահովություն</u>

2012-2016թթ. Վեդի քաղաքում փաստագրվել են 1200 ընտանիքներ, որոնցից 400 ստացել են ընտանեկան նպաստներ:

Վեդու համայնքապետարանը 4 տարիների ընթացքում դրամական օգնություն է տրամադրել շուրջ 868 ընտանիքների, փաստացի ծախսը կազմել է շուրջ 18289000 դրամ:

Յուրաքանչյուր նոր ծնված երեխայի և նորապսակներին խրախուսման կարգով Վեդու համայնքապետարանը 2009թ. տրամադրվում է նվերներ:

2012-2016թթ. Ընթացքում 611 նորածին երեխայի և 57 ամուսնացող զույգի տրամադրվել է նվեր, որի ընդհանուր ծախսը կազմել է 3340000 դրամ:

Թաղման ծախսերի համար 2012-2016թթ.. օգնություն են ստացել 21 ընտանիք, 567000 դրամի չափով:

Բուժօգնություն ստանալու համար դիմել են 90 քաղաքացիներ, որոնց համար փոխանցվել են շուրջ 9454000 դրամ:

Քաղաքապետարանի և սոցիալական հարցերով քաղաքացիների կապը ամրապնդելու նպատակով մշակվել և կայքում բացվել է, Հաճախակի տրվող հարցեր խորագիրը, որը հնարավորություն է տալիս քաղաքացիներին տեղեկանալ իրենց հուզող հարցերի պատասխաններին:

2017-2021թթ. Նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը

1. 900 Անապահով ընտանիքների դրամական օգնություն – 20 մլն դրամ
2. 700 նորածին երեխայի և 100 ամուսնացող զույգի նվեր տրամադրում - 4 մլն դրամ
3. Սոց.անապահով 100 բնակիչների բուժ.ծախսերի հոգում – 1,1 մլն դրամ
4. Անապով բնակիչների թաղման ծախսերի համար – 1 մլն դրամ

**<u>Երեխաների իրավունքների պաշտպանություն</u>**

Վեդի քաղաքում գործում են 3 մանկապարտեզներ, 3 արտադպրոցներ: Քաղաքապետարանի աշխատակազմում խնամակալության և հոգաբարձության մարմնի գործառույթներն իրականացնում է օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծված և հասարակական հիմունքներով գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը:

Վեդի քաղաքի թիվ 1 հիմնական դպրոցում գործում է ներառական կրթություն / ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ առանձնահատուկ կրթական կարիքներ ունեցող անձանց համար/: 2017-2021թթ. անհրաժեշտ է արտադպրոցական մատուցվող ծառայությունների մեջ ներառել նաև ներառական կրթությունը:

## Երիտասարդության հետ տարվող աշխատանքներ

Երիտասարդության ոլորտի իրավական նորմատիվային միակ փաստաթուղթը երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգն է, որը սահմանում է երիտասարդական պետական քաղաքականության սուբյեկտները, քաղաքականության սկզբունքները, իրականացման նպատակներն ու հիմնական ուղղությունները:

Երիտասարդական կյանքի զարգացման գործում ակտիվ մասնակցություն ունի Վեդու համայնքապետարանը: Վեդու քաղաքային համայնքի տարեկան բյուջեում նախատեսվում է 2 մլն դրամ անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձերի վճարման համար: 2012-2016թթ. ուսման վարձավճար է փոխանցվել 5 մլն դրամ՝ 120 անապահով ուսանողի համար:

Նախատեսվում է առաջիկա տարիներին սոց.անապահով 135 ընտանիքների ուսանողների ուսման վարձ փոխանցել 6 մլն դրամ:

## Ֆիզիկական կուլտուրա և սպորտ

Քաղաքում գործում է մեկ մարզական ուսումնական հաստատություն: 4 տարիների ընթացքում 64 մլն դրամ է ծախսվել Վեդու մարզադպրոցի կողմից մատուցվող ծառայությունների որակի պահպանման համար: Վեդու մարզադպրոցում 110 երեխա ստանում են անվճար ծառայություն: Վեդու մարզադպրոցի գործունեությունը ապահովելու համար անհրաժեշտ է թարմացնել գույքը

- ✓ Մարզադպրոցի ծանրամարտի խմբասենյակի համար գույքի ձեռք բերում
- ✓ Մարզադպրոցի ըմբշամարտի խմբասենյակի համար գույքի ձեռք բերում
- ✓ Մարզադպրոցի բռնցքամարտի խմբասենյակի համար գույքի ձեռք բերում
- ✓ Մարզադպրոցի ֆուտբոլի խմբակի համար գույքի ձեռք բերում
- ✓ Մարզադպրոցի կարատե դո մարզաձևի համար գույքի ձեռք բերում
- ✓ Մարզադպրոցի բասկետբոլ մարզաձևի համար գույքի ձեռք բերում
- ✓ Մարզադպրոցի աթլետիկամարզաձևի համար գույքի ձեռք բերում
- ✓ Մարզադպրոցի համար գույքի ձեռք բերում

2017-2021թթ. Նախատեսվում է իրականացնել Վեդու մարզադպրոցի ջեռուցման համակարգի տեղադրում:

## Մշակույթ

Վեդի քաղաքում գործում է Վեդու մշակույթի տուն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը: 88 միջոցառման կազմակերպման և բնակչության լայն հատվածներին մատուցելու համար Վեդու համայնքապետարանը 4 տարիների ընթացքում ծախսել է 48 մլն դրամ: 2013թ. շահագործման է հանձնվել Վեդու մշակույթի տունը:

Առաջիկա տարիներին նախատեսվում է մշակույթի տան պահպանման և միջոցառումների կազմակերպման համար ծախսել 60 մլն ՀՀ դրամ: 2017-2021թթ. Նախատեսվում է իրականացնել

- Տիկնիկային թատրոնի ստեղծում
- Ուրախների և հնարամիտների ակումբի հիմնում:

Նոր միջոցառումները կխթանեն բնակչության մշակութային կյանքի ակտիվացմանը, ինչպես նաև հնարավորություն կստեղծվի ամրացնել երիտասարդների հետ կապը: Միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ կլինի 600 հազար դրամ:

*Քաղաքաշինություն և ճարտարապետություն*

Քաղաքաշինության բնագավառում Վեդի քաղաքի հաստատված Գլխավոր հատակագծի դրույթներին համապատասխան անցած տարիներին մշակվել և ներդրվել են ոլորտի ներդրումային գրավչությանը և գործարար միջավայրի բարելավմանն ուղղված համալիր ծրագրեր՝ նպատակ ունենալով Վեդի քաղաքի համաչափ տարածական զարգացման առաջնահերթության սկզբունքի արմատավորումը:

ՀՀ կառավարության 30.11.2006թ. N 1726-Ն որոշմամբ հաստատվել է Վեդի քաղաքի Գլխավոր հատակագիծը: Այն գործողության մեջ է դրվել 2006թ-ից, որով նախանշվել էին քաղաքի զարգացման հեռանկարները մինչև 2020 թվականը:

- մշակվել և Վեդու քաղաքապետի, Վեդի քաղաքի ավագանու որոշումներով հաստատվել են մի շարք քաղաքաշինական՝ քաղաքի առանձին տարածքների գոտիավորման նախագծեր և առաջնահերթ շինարարության կառուցապատման գծագրեր:

Մասնավորապես գոտիավորման նախագծեր են մշակվել և հաստատվել կենտրոնական և հարակից փողոցների տարածքների համար.

- ➢ կազմվել են նաև այլ ծրագրեր
- ➢ կատարվել են գույքագրման աշխատանքներ
- ➢ այլ միջոցառումներ

Վեդի քաղաքի Գլխավոր հատակագծի իրացման վերլուծության և նախորդ տարիների մոնիտորինգի արդյունքների հիման վրա, 2012-2016թթ. կատարվել են  քաղաքի Գլխավոր հատակագծի ճշգրտման աշխատանքները:

2012թ. ընթացքում իրականացվել է Վեդի քաղաքի Գլխավոր հատակագծի փոփոխություն իրական իրավիճակի հետ:

Կատարվել են կառուցապատման նպատակով հողաբաժանման սխեմաների մշակման աշխատանքներ՝ աճուրդային կարգով հողամասերի վաճառք իրականացնելու համար:

Քաղաքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկություններով (մրցույթներով և աճուրդներով) տրամադրման և օտարման նպատակով 2012-2016թ.թ. նախապատրաստվել են թվով 10 փաթեթներ (7 հատ աճուրդ, 3 մրցույթ): Հողամասերը նախատեսված են հիմնականում անհատական բնակելի տների կառուցման, ինչպես նաև բազմաբնակարան շենքերի կառուցման, հասարակական և այլ բնույթի կառուցապատման համար:

Վեդի քաղաքի փողոցաճանապարհային ցանցի կատարելագործման նպատակով իրականացվել է.

- Թումանյան փողոցի լայնացում թիվ 15 շենքի մոտ, Կասյան, Գայի, Արարատյան անցուղի փողոցներով թիվ 2 դպրոցի մոտեցումների երթևեկելի մասի վերանորոգում:
- Շիրազ փողոցի մ աս ն ակ ի  ասֆալտապատում – 1188000դրամ
- Պուշկին, Ս.ՆԻկողոսյան, Սայաթ-Նովա փողոցների մասնակի բարեկարգման և ասֆալտապատման աշխատանքներ
- Իսահակյան փողոցի ասֆալտապատում

*Առաջիկա տարիների ընթացքում նախատեսվում է պահպանել համայնքում առկա ասֆալտապատ ծածկույթը / Կասյանի մի հատված, Արցախի մի հատված, Թումանյան, Կոմիտաս, Գ.Սարոյան, Արարատյան նրբ., Իսահակյան, Շիրազ փողոցի մի հատված, Գայի, Պուշկին, Ս.Նիկողոսյան, Սայաթ-Նովա, Նար – Դոս /:*

*Նախատեսվում է առաջիկա տարիներին ասֆալտապատել Կասյան, Ա. Եղյան, Հ.Շիրազ 1800քմ, Պ.Սևակ փողոց 2800քմ:*

*Ինչպես նաև նախատեսվում է իրականացնել գծանշման և երթևեկության նշանների տեղադրման աշխատանքներ:*

Պարբերաբար քաղաքի ամբողջ տարածքում իրականացվել են փողոցների բարեկարգման և փոսալցման աշխատանքներ: Ընդհանուր առմամբ 2012-2016թթ. Ընթացքում կոպճապատվել է 21823քմ տարածք, որի համար ծախսվել է 11634000 դրամ: Կոպճապատվել են Կասյան և Թումանյան փողոցների հատման մասից մինչ Կասյան Սայաթ – Նովա փողոցների հատման հատվածը /830քմ/: Սայաթ – Նովա փողոցի վերջնամասից մինչև Ս.Նիկողոսյան փողոցի հատման մասը /904քմ/: Ս. Նիկողոսյան 1-ին նրբանցքից մինչև մարզադպրոցի հատող տարածքը /945քմ/: Պուշկին փողոցում զինկոմիսարիատի դիմացի հրապարակը /42քմ/, Արցախի և Ավետիք իսահակյան փողոցի հատման մասը /50քմ/: Իսահակյան և Եղ.Չարենց փողոցների հատման վայրից մինչև Արցախի փողոց /384քմ/: Գայի և Կասյան փողոցի հատման խաչմերուկ, Յր.Ներսիսյան և Դ.Վարուժան փողոցներն ամբողջությամբ /985քմ/: Յր.Ներսիսյան, Մ.Բաղրամյան, Ս.Վարդանյան փողոցների հատման կետից մինչև Կասյան փողոցի հատման խաչմերուկը/670քմ/: Ներսիկ Մկրտչյան փողոց /400քմ/, Խանջյան փողոց /700քմ/, Գ.Գալստյան /700քմ/, Արարատյան 43, 49, 49/1բազմաբնակարան շենքերի տարածքները /800քմ/:

Առաջիկա տարիներին նախատեսվում է շարունակել կոպճապատման և փոսալցման աշխատանքները: Աշխատանքների իրականացման համար նախատեսվում է 7 մլն դրամ փոսալցման և 7 մլն դրամ հարթեցման և կոպճապատման համար:

*2012-2016թթ. ընթացքում իրականացվել են նաև.*

- Նախագծային ճանապարհների և փողոցների համար պատվիրվել են և կազմվել են նախագծանախահաշվային փաստաթղթեր

*Հետիոտնային անցումներ*

Հետիոտնի տեղաշարժման անվտանգության ապահովման և տրանսպորտի անարգել աշխատանքի նպատակով 2012-2016թթ. Համապատասխան երթևեկության կազմակերպման սխեմայի կատարվել են գծանշման աշխատանքներ` Արարատյան, Թումանյան, Գայի, Կոմիտաս և Կասյան փողոցներում:

Տեղադրվել են երթևեկության նշաններ Կասյան և Գայի փողոցներում:

Հետագա տարիների ընթացքում նախատեսվում է կետագծման համար 2 մլն դրամ:

*Քաղաքաշինության ոլորտում ներդրումային ծրագրերի զարգացման ուղղությամբ*

Մասնավոր տարբեր ներդրողների հետ քննարկումներ անցկացնելու համար կատարվել են քաղաքի կոնկրետ տարածքների ուսումնասիրություններ և տեղադրվել են կանգառներ

- Թումանյան փողոցի վրա - 1 հատ

Պատրաստ են նաև 8 կանգառների տեղադրման փաստաթղթերը:

Նախատեսվում է տեղադրել 2 կանգառ 1.5 մլն դրամ արժողությամբ:

Ուսումնասիրվել և համայնքի մայթերի բանուկ հատվածներում տեղադրվել են թվով 20 հանրային նստարաններ, որոնց համար ծախսվել է 992000 դրամ.

- Արարատյան փողոց - 18 հատ
- Թումանյան փողոց – 2 հատ

2017-2021թթ. նախատեսվում է տեղադրել թվով 30 նստարան- 1.5 մլն դրամ արժողությամբ և 60 հատ աղբաման, 1,2 դրամ արժողությամբ, քաղաքի տարբեր հատվածներում:

*Բակային տարածքներ*

38 բազմաբնակարան շենքերի բակերում սպասարկվել է լուսավորության ցանցի շահագործումը:

2012թ. իրականացվել է Թումանյան շենքերի ասֆալտապատումը:

Նախատեսվում է ասֆալտապատել բազմաբնակարան շենքերի բակային տարածքները /Գայի 5, Գայի 7, Գայի 9, Պուշկին 1, Արարատյան 45 բազմ. բնակելի շենքեր/:

Նախատեսվում է առաջիկա 5 տարիների ընթացքում բարեկարգել բակային տարածքները և կառուցել խաղահրապարակներ /Գայի 7 և Գայի 9 շենքերի հարակից տարածքը 750քմ, Արարատյան 45 շենքի 512քմ բակային, Պուշկին 1 շենքի բակային տարածքը 2500քմ/:

*Մինի բացօթյա շուկաներ*

Փողոցային առևտրի կարգավորման նպատակով Վեդի քաղաքի տարբեր հատվածներում մինի գյուղատնտեսական ապրանքների բացօթյա շուկաների կազմակերպման համար քննարկվել և տարածքների առաջարկություններ են ներկայացվել: Կայացվել է

քաղաքապետի որոշում որով տրվել է թույլտվություն Ա.Սիմոնյանի և Գ.Սարոյանի անվամբ հրապարակների կից տարածքում իրականացնել բացօթյա առևտուր: Ընդհանուր առմամբ համայնքում գրանցված է 4 բացօթյա առևտրի կետ: Դեկտեմբեր ամսին ակտիվանում է բացօթյա առևտուրը և թիվը դառնում 8:

2017-2021թթ. Ընթացքում նախատեսվում է իրականացնել աշխատանքներ բացօթյա առևտուրը ճիշտկազմակերպելու համար:

***Սալիկապատում***

2012-2016թթ. Ընթացքում Վեդի քաղաքում իրականացվել է 5423քմ սալիկապատում, 1671 գծ եզրաքարերի տեղադրում: Կատարված աշխատանքների վրա ծախսվել է 6591000 դրամ: Սալիկապատում իրականացվել է Արարատյան, Գայի, Կասյան, Պուշկին փողոցների մայթերում:

Նախատեսվում է իրականացնել սալիկապատում ևս 5 փողոցի մայթերում, 15 մլն դրամ արժողությամբ:

*Արտաքին լուսավորություն*

Վեդի քաղաքի արտաքին լուսավորությունը ապահովվում են 3.5 ժամ ամռան ամիսներին և 6 ժամ ձմռան ամիսներին: Շահագործվում և պահպանվում է 50 փողոցների և նրբանցքների, 38 բակերի և 2 զբոսայգիների արտաքին լուսավորության ցանցը:

Նոյեմբերի 1-ի դրությամբ Վեդի քաղաքի լուսավորության ցանցին են միացված Արարատյան, Կասյան, Գայի, Խանջյան, Թումանյան, Գ.Չաուշ, Ն.Ստեփանյան, Հ. Շիրազ, Պ.Սևակ, Ս. Նիկողոսյան, Կոմիտաս, Բաղրամյան, Պուշկին, Սայաթ-Նովա, Մ.Մաշտոց, Գ. Մարզպետունի, Ս.Թեհլերյան, Ն.Մկրտչյան, Գայի, Անդրանիկ, Արցախ, Կամո, Մուրացան, Դ.Վարուժան, Գնունի, Տերյան, Ս.Վարդանյան, Գ.Գալստյան, Վ.Փրվեյան, 26 Կոմիսարներ, Չարենց, Իսահակյան, Մ.Խաչատրյան փողոցները:

Արտաքին Լուսավորության ցանցի պահպանման համար ծախսվել է 30316000, որից 20800000 դրամը էլ.էներգիայի ծախս:

2017-2021թթ. Ընթացքում նախատեսվում է լուսավորության ցանցին միացնել նաև Նար Դոս, Ա. Խաչատրյան, Լ.Վարդանովա փողոցները:

Լուսավորության ցանցի 2017-2021թթ. Ընդհանուր ծախսը կնվազի հաշվի առնելով որ ներդրվում են էկոնոմ լամպեր, որոնց ծախսը 1 ժամում կազմում է 40 վատտ:

2017-2021թթ. Լուսավորության ցանցի սպասարկման և էլ. էներգիայի ծախսի նվազման առումով նախատեսվում է անցնել արևային լուսավորության համակարգի: Արևային լուսավորության համակարգի ներդրման համար մոտավոր հաշվարկներով անհրաժեշտ կլինի 35 մլն դրամ, որի ընդհանուր ծախսը հետհետկբերի: Այն էկոլոգիապես մաքուր է, արտանետումներ չունի, ամռան ամիսներին էլ.հոսանքի ավելցուկը հնարավոր կլինի վաճառել էլ.ցանցին կամ տրամադրել անապահով ընտանիքներին: Այսպիսով արևային համակարգի ներդրումը հնարավորություն կտա ունենալ էկոլոգիապես մաքուր և մեկ անգամվա ներդրմամբ հնարավոր կլինի ցերեկային լուսավորության ծախսը նվազեցնել մինիմումի:

*Տրանսպորտ*

Վեդի քաղաքում չեն գործում ներքաղաքային հասարակական փոխադրամիջոցներ:

Քաղաքից Երևան, Արտաշատ և այլ համայնքեր գնալու համար բնակչությունը օգտվում է միջհամայնքային փոխադրամիջոցներից, որոնք.

Վեդի – Երևան – Վեդի – Յուրաքանչյուր ժամը մեկ անգամ , արժեքը 400 դրամ:

Վեդի – Արտաշատ – Վեդի – արժեքը 200 դրամ :

Այլ համայնքներ – արժեքը 100-150 դրամ:

Վեդի քաղաքում ավտոբուսներով իրականացվող ուղևորափոխադրումների տեսակարար կշիռը հանրապետականի ընդհանուր ծավալում դեռևս մնում է ցածր՝ կազմելով մոտ 15,0%, իսկ միկրոավտոբուսներին բաժին է ընկնում ուղևորափոխադրումների 20,0%-ը: Ոչ արդյունավետ հասարակական տրանսպորտի գործող երթուղային ցանցը և կառավարման համակարգը չեն խթանում առկա տրանսպորտային միջոցների, որն իր հերթին պատճառ է դառնում այդ ոլորտների պահպանման և շահագործման համար ավելի մեծ ծավալի պետական ներդրումների:

Համայնքում գործում է մեկ տաքսի ծառայություն:

Վեդի քաղաքում հաշվառված է 1953 մեքենա, որից 121-ը հաշվառման են կանգնել 2012-2016թթ.:

*Հաշմանդամների տրանսպորտային սպասարկ ում*

Համայնքի ավտոկայանատեղիներում բացակայում են հաշմանդամների համար անհրաժեշտ պայմաններ: Առաջիկա տարիներին նախատեսվող բոլոր քաղաքաշինական աշխատանքներում առաջնահերթության կարգով ներառել հաշմանդամների տեղաշարժման համար անհրաժեշտ պայմաններ:

*<u>Կոմունալ ոլորտ</u>*

*Ջրամատակարարում և ջրահեռացում*

Վեդի քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունները մատուցվում են <<Հայջրմուղկոյուղի> ընկերության կողմից:

Ջուրը սպառողին բաշխվում է 38059.3 գծմ երկարություն ունեցող բաշխիչ ցանցի և 1000 խմ տարողությամբ 2 ջրամբարների միջոցով:

Վեդի քաղաք մտնող ջրաքանակը մատակարարվում է ինքնահոս եղանակով:

- օրվա ընթացքում ջրամատակարարման ժամերի միջին տևողությունը կազմում է 5-6 ժամ
- ջրի որակը բնակչությունը գնահատում է անբավարար

2012-2016թթ.. ընթացքում Կոյուղի է անցկացվել Շիրազի և Արտակ Բարսեղյան փողոցներում, որի համար ծախսվել է 1,7 մլն դրամ:

*Բազմաբնակարան շենքերի կառավարում*

Վեդի քաղաքում հաշվառված է 38 բազմաբնակարան շենք, որից վթարային են 3-ը: Թվով 38 բազմաբնակարան շենքերի կառավարումն իրականացվում է Վեդու քաղաքապետարանի կողմից:

Բազմաբնակարան շենքերի տեխնիկական վիճակը գնահատվում է անբավարար:

2012-2016թթ. ընթացքում իրականացվել է 6 բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում:

Մասնակի վերանորոգվել են Թումանյան 3/1, Գայի 7, Կասյան 26/1, 26/10, Արարատյան 41, 43, 49/1 բազմաբնակարան շենքերի տանիքները, որի համար ծախսվել է շուրջ 6400000 դրամ:

Կատարվել են շքամուտքերի վերանորոգման և մուտքերի մետաղե դռների տեղադրման և պատուհանների փոխարինման աշխատանքներ, որի համար ծախսվել է 2 մլն դրամ, Արարատյան և Կասյան փողոցների բազմաբնակարան շենքերում: Բազմաբնակարան շենքերի շքամուտքերի դռների փոխում 1044000 դրամ արժողությամբ: Դռների տեղադրում բազմաբնակարան շենքերում 5 մլն դրամ:

*Աղբահանություն և սանիտարական մաքրում*

Վեդի քաղաքի սանիտարական մաքրման ենթակա փողոցների, հրապարակների, մայթերի, բակային տարածքների և այլ կառույցների ընդհանուր մակերեսը կազմել է 52782քմ: Կատարվել է 38 շենքերի բակերում, Արարատյան փողոցում իրականացվել են սան.մաքրման աշխատանքներ /52782քմ/, որի համար ծախսվել է 2 մլն դրամ նյութածախսի վրա և 41 մլն դրամ աշխատավարձ:

2017-2021 թթ. Նախատեսվում է սան.մաքրման համար ծախսել 30 մլն դրամ:

Սանիտարական մաքրման (ներառյալ ձմռան ամիսներին) աշխատանքներն իրականացվում են Վեդու քաղաքային կոմունալ ծառայության կողմից:

Աշխատանքներն իրականացվում են ամեն օր ձեռքի միջոցով: Մաքրման աշխատանքները ամռան ամիսներին կատարվում են ժամը առավոտյան 6-$^{00}$-ից մինչև $12^{00}$, ձմռանը՝ $8^{00}$-$10^{00}$:

Ձեռք է բերվել ԶԻԼ մակնիշի ավտոմեքենա սան.մաքրման աշխատանքները իրականացնելու համար:

Վեդի քաղաքի աղբահանության աշխատանքներն իրականացվում է <Մաքուր երկիր> մասնագիտացված կազմակերպության կողմից: Ստեղծվել է աղբահանության գումարների հավաքագրման միասնական շտեմարան, իրականացվել տեղեկատվության ամփոփում և տրամադրում: 2012-2016թթ.ընթացքում համայնքի աղբահանության համար Վեդու քաղաքային համայնքի բյուջեից ծախսվել է 73 մլն դրամ:

Առաջիկա 5 տարիների ընթացքում որակյալ աղբահանություն իրականացնելու համար կծախսվի 96 մլն դրամ:

*Կանաչապատում*

Համայնքն ունի կանաչապատման 50000 քմ մակերես: Տարածքներում առկա են 1200 ծառ և 200 թուփ, որից հուշարձանի տարածքում 515 /ծառ և թուփ/ փողոցների

երայնքով տնկվել և պահպանվում են 205 /ծառ և թուփ/, քաղաքապետարանի վարչական շենքի տարածքում 29 ծառ, կենտրոնական այգում 185 /ծառ և թուփ/ և Արարատյան 56 հասցեում 23 ծառ /ծառ և թուփ/: Ընդհանուր առմամբ 4 տարիների ընթացքում կանաչապատման ուղղությամբ ծախսվել է 4.9 մլն դրամ:

